



ՄՊՀՀ մամլո հաղորդագրություն # 3

Երևան, Հայաստան – 19-ը հունիսի, 2007 թ

Քաղաքականությունների լիազորված ձևավորում աշխատուժի ժամանակակից ստանդարտ տվյալների միջոցով

14:30-17:00 – ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և «ԱՄՆ ՄԶԳ Հայաստան, Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման» ծրագրի կողմից համատեղ կազմակերպված «Աշխատուժի տվյալների արժեքը և կիրառությունը» խորագրով աշխատանքային հանդիպման շարժիչ ուժը համագործակցության խորացումն էր Հայաստանում աշխատուժի տվյալներ հավաքող, վերլուծող և կիրառող ՀՀ կառավարական մարմինների միջև: Սեմինարին մասնակցում էին 38 փորձագետներ մի շարք առանցքային պետական մարմիններից:

Սեմինարը դիտարկում էր աշխատուժի տվյալները՝ որպես հզոր գործիք սոցիալական պաշտպանության ոլորտի բերափոխումների համատեքստում կառավարության որոշումների ընդունման, ինչպես նաև քաղաքականությունների ձևավորման համար: Միջոցառումը նաև կառուցողական քննարկման հնարավորություն ընձեռեց այն հարցում, թե ինչպես կարելի է կատարելագործել աշխատուժի տվյալների հավաքումը և կիրառումը Հայաստանի տարածքում՝ կենտրոնանալով ՀՀ կառավարության համակարգում միասնական չափորոշիչների և ցուցանիշների, ուսումնասիրության նախագծման, որակի հսկողության, վերլուծության, տվյալների կառավարման և տարածման, ինչպես նաև հանրությանը հաշվետու լինելու վրա:

Մասնակից հաստատությունները և կազմակերպություններն էին.

1. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
2. ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն
3. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն
4. ՀՀ Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ
5. ՀՀ Զբաղվածության ծառայության պետական գործակալություն
6. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ
7. ՀՀ Աշխատանքի պետական տեսչություն
8. Նորքի տեղեկատվության վերլուծության կենտրոն և
9. «Ամերիա» ՓԲԸ

Աշխատուժի տվյալները միջազգայնորեն կիրառվում են կառավարական կազմակերպությունների ներսում կառավարումը և քաղաքականությունները բարելավելու համար: Հիշյալ տվյալները թույլ են տալիս պատկերացում կազմել աճի և զարգացման՝ պետության կարողությունների մասին, ինչը էական է այն ներդրողների համար, որոնք փորձում են որոշել, թե որտեղ ներդնել իրենց ֆինանսական միջոցները:

Օտարերկրյա ուղղակի ներդրումները էական են պետության զարգացման, աշխատատեղերի ստեղծման և աշխատուժի հզորացման տեսանկյունից: Այնպիսի միջազգային կազմակերպություններ, ինչպիսին է ՄԱԿ-ը, ավելի մեծ ուշադրություն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

NATIONAL STATISTICAL
SERVICE OF THE REPUBLIC
OF ARMENIA



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

ԱՄՆ ՄԶԳ ՀԱՅԱՍՏԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ԴՅՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

USAID ARMENIA SOCIAL
PROTECTION SYSTEMS
STRENGTHENING PROJECT

Են դարձնում՝ ըստ սեռերի տարանջատված տվյալներին, իսկ աշխատուժի տվյալները տրամադրում են տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են զարգացման ծրագրերում և քաղաքականության որոշումների ընդունման գործընթացում տղամարդկանց և կանանց ներգրավման կարիքները բացահայտելու համար:

Այս նախաձեռնությունը մեկնարկն է այն հետագա քննարկումների և համագործակցության, որոնք ուղղված են Հայաստանում աշխատուժի տվյալների և տնային տնտեսությունների ոլորտի ուսումնասիրությունների կատարելագործմանը՝ ներառյալ ենթակա տեղեկատվական տեխնոլոգիաների և վարչական համակարգերի: ԱՄՆ ՄԶԳ ՄԴՀԴ ծրագիրը նախատեսում է իր նպաստն ունենալ նաև նպատակային վերապատրաստումների, ինչպես նաև ոլորտի զարգացմանն ուղղված այլ մասնագիտական օժանդակության միջոցով:

2007-ից 2011թթ. միջև ընկած ժամանակահատվածում ծրագիրը կաջակցի սոցիալական հատվածի բարեփոխումների երկրորդ փուլը: Ծրագրի նպատակը Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացումն է, ինստիտուցիոնալ և մարդկային ռեսուրսների կատարելագործումը, ինչպես նաև սոցիալական ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների կարողությունների հզորացումը:

###